ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՋՆԻՎ ՂԱԿՈԲՅԱՆ

ՋԱՎԱԽՔ
(պատմական տեղեկանք)

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակում Ջավախքը Հայասա պետական կազմավորման մասն է կազմում եւ Զաբախա ձեւով առաջին անգամ հիշատակվում է Արգիշտի Ի-ի (786-764 մ.թ.ա.) թողած նշանավոր «Խորխոռյան» կոչվող տարեգրության մեջ՝ ըստ որի նա գրավել է Ջավախք նահանգը եւ նրա շրջակա տարածքները[1]: Ըստ Ղ. Կարագյոզյանի՝ տարեգրության մեջ նշված է եղել Զաբախա անունը, որը հետագայում ենթարկվելով հնչունային փոփոխությունների՝ դարձել է Ջաբախա-Ջավախա-Ջավախք: Վ. Սարգսյանը, առաջադրում է այն տեսակետը, որ Ջավախքն իր անունը ստացել է նպաստավոր հանգստավայր լինելու եւ հովիտներում հարուստ ջուր ունենալու պատճառով[2]:

Ջավախքը հիշատակվում է նաեւ ուրարտական մի քանի թագավորների թողած արձանագրություններում: Մինչուրարտական շրջանում կատարված ուսումնասիրությունների հիմնան վրա կարելի է ենթադրել, որ Ջավախքը մ.թ.ա. 2-րդ. հազարամյակում մտել է հայկական պետական կազմավորումներից մեկի՝ ոչ միայն Դիաուխիի (Տայք), Էթիունիի վարչական կազմի մեջ, այլեւ եղել է բավական ընդարձակ ինքնուրույն կազմավորում՝ ընդգրկելով հետագայի Գուգարք աշխարհի ամբողջ արեւմտյան մասը[3]:

Մ.թ.ա. Զ դ. Ջավախքը Երվանդյան թագավորության հյուսիսային գավառներից էր: Մ.թ.ա. 270 թ. Մեծ Հայքի հյուսիսային հարեւանությամբ կազմավորվում է Վրաց Փարնավազյան թագավորությունը, որը, օգտվելով հայերի հակառակորդ սելեւկյանների օժանդակությունից, հայոց երկրից գրավում եւ անջատում է Գուգարքն ու Ջավախքը, ինչպես նաեւ հարակից այլ երկրներ: Այդ ժամանակ Ջավախքի կենտրոնը Ծունդան էր, որը հայերը կոչում էին Քաջատուն կամ Քաջաց քաղաք: Մ.թ.ա. 2-րդ դ. Արտաշես Ի-ի (մ.թ.ա.189-160 թթ.) կողմից Ջավախքը Գուգարք նահանգի հետ միասին վերամիացվել է Մեծ Հայքի թագավորությանը, որի կազմում մնացել է մինչեւ Արշակունիների թագավորության անկումը՝ 428 թ.: Արշակունիների օրոք գավառը հիշատակվում է որպես Վարձավունի նախարարական տան կալվածք[4]:

Երբ 387 թ. Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Պարսկաստանի եւ Բյուզանդիայի միջեւ, Ջավախքը նույնպես բաժանվեց երկու մասի՝ ստորին եւ վերին Ջավախքի: Վերջինս էլ Գուգարքի կազմի մեջ մտնելով՝ անցավ Արեւելյան Հայաստանի մեջ: Գուգարքի գավառներից ութերորդը եղել է Ջավախքը, որն ընկած էր նահանգի կենտրոնական մասում, զբաղեցնելով մասնավորապես համանուն սարահարթի (Ախալքալակի սարավանդ, Ջավախքի լեռնադաշտ) ու վերջինս շրջափակող լեռնակազմությունների տարածքը: Հյուսիսից սահմանակցում է Թռեղքին, հյուսիս-արեւելքից՝ Սամսարի, արեւելքից՝ Ջավախքի լեռներին (Կեչուտի, Մթին), իսկ հարավ-արեւելքում՝ Ախալքալակի սարավանդի շարունակությունը կազմող Աշոցքի սարահարթին, հարավ-արեւմուտքում՝ Եղնախաղի

1 Տե՛ս Ղ.**Գ.Ժամկոչյան**, Հայ ժողովրդի պատմություն,հատ.1, Երեւան,1963, էջ 64:
2 **Ղ. Կարագյոզյան**, Հայաստանը սեպագիր արձանագրություններում, հատ. 1, 1998, էջ 94:
3 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Երեւան, 1971, էջ 220:
4 Տե՛ս «Հայկական Սովետական հանրագիտարան», հատ. 9, Երեւան, 1983, էջ 480:

(Չլտրի) լեռներին: Գավառը հարուստ է լճերով Փարվանա, Տաբաձղուրի, Սաղամո, Խոզափին, Խանչալի, Մադաթափա եւ այլն: Փարվանայից սկիզբ է առնում Թ-ափարվան (հավանաբար նշանակում է Փարվանայից թափվող) վտակը: Լեռնադաշտը ծածկված է սեւահողով: Բացի հյուսիսային մասից՝ Ջավախքն անտառազուրկ է: Նախկինում անտառածածկ է եղել նաեւ կենտրոնական մասը: Ջավախքին վերաբերող հիշատակումներ կան վրաց տարեգիրների կողմից: Ըստ ավանդության՝ Հռիփսիմյան քարոզիչ քույրերից Նինոն (ըստ հայկական աղբյուրների՝ Նունե) Հայաստանից փոքձում է անցնել Վրաստան, լինում է Ջավախքում, Փարվանա լճի ափին հանդիպում հովիվների, որոնցից հարցնում է Մծխեթ տանող ճանապարհը:[5] Այս վկայությունը որոշակի պարզություն է մտցնում երկու հարցում: Նախ որ Նունեն մինչեւ Վրաստան լինելը եղել է Հայաստանում, ծանոթացել հայերենին, եւ ի թիվս այլ քարոզիչների այնտեղից քրիստոնեությունը տարածել է Վրաստանում: Եւ երկրորդ՝ Ջավախքի գործածական լեզուն եղել է հայերենը, այլապես Մծխեթից եկած հովիվների համար անհրաժեշտություն չէր լինի սովորելու հայոց լեզուն: Սակայն 428 թ. Արշակունյան թագավորության անկումից հետո հոգեւոր-եկեղեցական առումով Վրաստանը շարունակում էր մնալ Հայ Առաքելական եկեղեցու ազդեցության տակ, թեեւ արդեն փորձում էր ձեռք բերել ինքնուրույնություն:

Ջավախքի մասին հիշատակություն հանդիպում ենք արաբական արշավանքների ժամանակ: Հովհան Մամիկոնյանը գրում է արաբ զորավար Աբդռահիմն անցնում է «ի Հարք եւ ի Բասեան, ի Վիրք եւ ի Ջաւախս եւ ի Վանանդ. եւ առեալ հարկս, դառնայ ի Տաճկաստան»[6]: Ջավախքի շրջանը գտնվել է արաբական տիրապետության տակ մինչեւ Թ-դ. վերջը, երբ Հայոց Սմբատ I Բագրատունի թագավորը (890-914թթ.) իր թագավորությանը միացրեց Գուգարքը՝ Ջավախքի հետ միասին:

Սակայն Բագրատունիների անկումից հետո՝ Ժ դարի վերջին ԺԱ դ. սկզբին Ջավախքն անցավ վրաց Բագրատունիներին: ԺԱ դ. սկզբներին վրացիները Ջավախքում ամրապնդվելու նպատակով սկսում են կառուցել պաշտպանական կառույցներ: Բագրատ Դ 1044-47 թթ. Լիպարիտ Օրբելյանի դեմ պատերազմի ժամանակ Թ-ափարվան գետի եւ նրա ձախակողմյան Քառասունաղբյուր վտակի գոյացրած թերակղզու մասում կառուցում է Ախալքալակի բերդը: Վրաստանից այստեղ է բերվում որոշ թվով վրաց բնակչություն:

Սակայն Ջավախքը երկար չմնաց վրաց Բագրատունիների տիրապետության տակ: 1064 թ. Սելջուկ թուրքերը հարձակվում են Հյասպանի եւ Վրաստանի վրա եւ գրավում են նաեւ Ախալքալակի բերդը: Այս ժամանակշրջանի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ԺԲ-ԺԴ դդ. հայկական աղբյուրները, ըստ որոնց՝ Ծունդային փոխարինած Ախալքալակը սարսափելի կոտորածների եւ բռնագաղթի հետեւանքով կորցրել է իր բնակչության զգայի մասը: Ամբողջ ԺԱ դ. ընթացքում Ջավախքը ձեռքից ձեռք է անցնում: Միայն հաջորդ դարի վերջին՝ Թ-ամար թագուհու ժամանակ, Իվան եւ Զաքարե Զաքարյանները կարողացան հաղթանակ տանել Սելջուկ թուրքերի նկատմամբ եւ Վրաստանին անցան Ջավախքից մինչեւ Սպեր ընկած տարածքները: Այս շրջանում շարունակվեց վրացական նոր խմբերի ներթափանցումը Ջավախք, ակտիվացավ ուղղափառության տարածումը, վրացադավան եկեղեցիների կառուցման դեպքերը, երեւույթներ, որոնք վրաց Բագրատունիների ուժեղացման շրջանում բնորոշ էին ոչ միայն Ախալքալակին, այլեւ հայ-վրացական զինակցության շնորհիվ Վրաստանին միացված Հյուսիսային Հայաստանի մյուս գավառներին: Չնայած դրան՝ Լոռին, Սամցխե-Ախլցխան, Տավուշը, Սեւանի շրջակա գավառները շարունակում էին մնալ գերազանցապես հայաբնակ: Ուստի այդ հանգամանքը հաշվի առնելով եւ հայկական բանակին ոգեւորելու

5 Տե՛ս **Լեո,** Սահմանավեճեր, Թիֆլիս 1919, էջ 101:
6 **Հովհան Մամիկոնյան,**«Տարոնի Պատմություն», Երեւան. 1989, էջ 114:

համար՝ Թամար թագուհին Զաքարյաններին հանձնեց ազատագրված բոլոր հայկական տարածքները: Որոնք էլ Վրաստանի հովանավորության ներքո ստեղծեցին իրենց իշխանապետությունը: Զաքարեի եւ Իվանեի հորեղբոր ժառանգներին անցան Ծամքորը, Գարդմանը, Փառիսոսը, Ջավախքը եւ Տավուշը: Ջավախքի մարզպետ է նշանակվում Սարգիս Թմոգվեցին: Այստեղի հայ հոգեւոր կենտրոնը եղել է Զրեսկ ավանը[7]:

ԺԳ դ. 20-30-ական թթ. Հայաստանն ու Վրաստանը ենթարկվեցին միջինասիական զեղերի, մոնղոլների ասպատակություններին: Սակայն մի քանի գավառներում, այդ թվում նաեւ Ջավախքում իշխանները կարողացան պահպանել իրենց հարաբերական ինքնիշխանությունը: Ըստ 1245 թ. նոր վարչական բաժանման՝ մոնղոլների հսկողությամբ Ջավախքը մնաց Թորոսեցիների[8]: Օգտվելով վրացական եւ մոնղոլական հակամարտություններից՝ Թմկաբերդի մարզպետ Սարգիս Ջաղեցին ստեղծեց սեփական իշխանություն, որի կազմը ընդգրկում էր Տաշիրից մինչեւ Էրզրում ընկած սահմանները եւ իրեն հայտարարեց անկախ Հայաստանում եւ Վրաստանում: Այս իշխանությունը պատմության մեջ հայտնի է Սամցխե-Սաաթբագո անունով: Հայկական աղբյուրներում այն հիշատակվում է «Իշխանաց երկիր» անունով[9]: Այս իշխանապետության օրոք Ջավախքը սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ մշակութային զարգացում է ապրում: Հատկապես վերելք ապրեցին Թմոգվի եւ Ախալքալակ քաղաքները: Այդ մասին են վկայում վերջինիս քաղաքատեղիից հայտնաբերված խաչքարերը, որոնցից մեկի վրա պահպանվել է արձանագրություն՝ թվագրված 1289 թ.: Ախալքալակում ամիրսպասալար Շահնշահի օրոք՝ 1291 թ. ոմն Գեորգիի հովանավորությամբ կառուցվեց հայկական եկեղեցի[10]: 1484 թ. պարսկական զորքերը հարձակվում են իշխանության վրա, կողոպտում են բոլոր քաղաքները եւ բազմաթիվ հայերի գերի են վերցնում[11]: Սրանից հետո իշխանությունը գնալով թուլանում է եւ չի կարողանում դիմադրել Վրաստանի ճնշմանը եւ արդյունքում 1535 թ. այն անցնում է Վրաստանի իշխանության տակ, որ տեւում է շուրջ 20 տարի: Սակայն 1547 թ. սկսվում է օսմանյան թուրքերի եւ պարսիկների կռիվը :

1555 թ. Ամասիայի պայմանագրով Ջավախքն անցավ Պարսկաստանին իսկ Սամցխեն Օսմանյան կայսրությանը: 1578 թ. վերսկսվեց թուրք-պարսկական պատերազմը: Թուրքերը նորից ներխուժեցին Սամցխե եւ Ջավախք: Չլդրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նրանք պարտության մատնեցին պարսիկներին եւ տիրեցին Սամցխեին եւ Ջավախքին: Այսպիսով Չլդրի, Ախլցխայի, Ախալքալակի, Խերթվիսի եւ այլ բերդեր ընդունեցին օսմանյան գերշխանությունը: Աթաբեկի պաշտոնը կրկին թողնվեց տեղաբնիկներին, որոնք ընդունեցին մահմեդականություն: 1639 թ. Պարսիկների հետ կնքած հաշտության պայմանագրով՝ ողջ Արեւմտյան Հայաստանն անցավ Թուրքերի տիրապետության տակ, այդ թվում նաեւ Ախալքալակն ու Ախլցխան: Պատմական Ջավախքի տարածքը տրոհվեց մի քանի ինքնուրույն գավառների՝ սանջակների կարգավիճակով՝ Ախալքալակ, Խերթվիս, Քենարբել կենտրոններով[12]: Սկսվեց Թուրքական տիրապետության մի երկարատեւ եւ մղձավանջային ժամանակաշրջան:

Ջավախքն ի սկզբանե բնակեցված է եղել հայերով. այդ մասին վկայում են ինչպես հայ, այնպես էլ վրացական, արաբական, թուրքական եւ այլ սկզբնաղբյուրներ: Ըստ վրաց պատմաբան Լեոնտի Մրովելու, ինչպես նշվեց, Դ դարում Ջավախքի խոսակցական լեզուն

7 Տե՛ս «Հայկական Սովետական Հայաստան հանրագիտարան», հատ. 9, Երեւան, 1983, էջ 480:

8 Տե՛ս «Վրաց ժամանակագրություն1207-1318», Երեւան,1971, էջ 66,73:

9 **Լեո,** Սահմանավեճեր, էջ 105:

10 **Ա. Օրբելի**, «Հայ վիմագրություն», Երեւան, 1966, էջ 68:

11 Տե՛ս **Ավետիս Դավթյան**, Հայկական եւ հայախառը բնակավայրերը Վրաստանում, Երեւան, 1997, էջ 42:

12 Տե՛ս **Աշոտ Մելքոնյան,** Հայրենի Ջավախք, Լիբանան, 2002, էջ 49-50:

եղել է հայերենը: Ըստ թուրքական հարկային գրանցամատյանների՝ ԺՋ-ԺԸ դդ. Ջավախքի գյուղերն ու հարակից տարածքները եղել են բնակեցված հայերով: Նույն վկայությունը հանդիպում ենք նաեւ հայտնի աշխարհագետներ, վրաց հեղինակ Վախուշտ Բագրատիոնի եւ Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանի եւ այլոց աշխատություններում: Ուշագրավ է, որ կային բազմաթիվ բնակավայրեր, որոնք հիմնականում հայաբնակ էին: Այդ հանգամանքը հաստատվում է նաեւ առ այսօր, հատկապես Օրջայի տարածքում պահպանված եզակի խաչքարերից՝12-ից 7-ի վրա կան արձանագրություններ, որոնք թվագրվում են 1463-65 թթ: Նույն ժողովրդագրական իրավիճակն է տիրում նաեւ Թմուկ (Թմոգվի) բերդաքաղաքում[13]: Սակայն թուրքական կառավարության հաստատումը իր ազդեցությունն ունեցավ Ջավախքի էթնիկ կազմի վրա: Աստիճանաբար քրիստոնյաների թիվը նվազում է, իսկ փոխարենը աճում են մահմեդականները: Արդեն ԺԷ-ԺԸ դդ. զանգվածային կոտորածների եւ բռնի մահմեդականացման, արտագաղթերի, թուրքալեզու տարրերի ներթափանցման հետեւանքով, ինչպես ամբողջ Ախլցխայի նահանգի, այնպես էլ Ջավախքն ընդգրկող գավառների բնակչության մեջ զգալիորեն աճեց մահմեդականների թիվը, որոնք սկսեցին հանդես գալ որպես ընդհանուր հավաքականություն: Մահմեդանպաստ եւ հայերի կաթոլիկացման եւ վրացացման գործընթացներն ուժեղացան հատկապես ԺԸ դարում, երբ հյուսիսից սկսվեցին կովկասյան լեռնականների ասպատակությունները: Մի կողմից Վրաստանի, մյուս կողմից լեզգիների ասպատակություններին դիմադրելու համար Ախլցխայի փաշաներն սկսում են լեռնականներին վերցնել իրենց մոտ ռազմական ծառայության՝ որպես վարձկանների: Սուլթանական կառավարությունը սկսում է առատորեն վարձատրել ավարական խաներին եւ խրախուսել նրանց շարժը դեպի Ախլցխայի վիլայեթ եւ այնտեղից հարձակումներ գործել Վրաստանի վրա: Կարճ ժամանակում Ախլցխան վերածվում է մարդկանց վաճառատեղիի: Այստեղ վաճառում էին Դոնից եւ հյուսիսային Կովկասից առեւանգված ռուս աղջիկներ, վրացիներ, հյուսիսկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչներ[14]: Վրաց թագավորներն էլ իրենց հերթին լեզգիներին պատժելու պատրվակով ներխուժում էին Ախլցխայի եւ Ախալքալակի գյուղերը, կողոպտում եւ գերի տանում բնակչությանը, հատկապես քրիստոնյաներին: Լեռնականների եւ թուրքական եւ պարսկական իշխանությունների կազմակերպած ավերածություններից խուսափելու համար վրաց թագավորները իրենց հերթին փորձում էին ավելի մերձենալ Ռուսաստանին:1768 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ռուսաստանին հաջողվեց իր կողմը գրավել Վրաստանին եւ ներքաշել ռազմական բախման մեջ՝ ընդդեմ Օսմանյան կայսրության: Վրաստանը դիմեց այդ քայլին՝ հույս ունենալով այդ միջոցով ձեռքբերել Ախալքալակը, բայց ապարդյուն: Այսպիսով Օսմանյան լուծը շատ աղեխարեր է լինում ինչպես հայ, այնպես էլ վրաց բնակչության էթնոկրոնական վերակերպումների, ազգաձուլման համար: Ցավոք այս գործընթացները շարունակվեցին նաեւ ԺԹ դարի առաջին քառորդին:

ԺԹ դարի սկզբին Ռուսական կայսրությունը աշխուժացրեց իր արեւելյան քաղաքականությունը՝ նպատակ ունենալով մեկընդմիշտ հաստատվել Անդրկովկասում: 1801 թ. Վրաստանի միացումը Ռուսաստանին հանդիսացավ այդ գործընթացի առաջին ճիշտ քայլը: 1806 թ. սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, իսկ 1807 թ. ռուսները առաջին անգամ մտան Ախալքալակի սանջակ: Առանց դիմադրության հանդիպելու մայիսի 5-ին ռուսները գեներալ Գուդովիչի գլխավորությամբ հասան Ախալքալակի բերդի մոտ: Պատասխան չստանալով բերդն առանց կռվի հանձնելու Գուդովիչի առաջարկին՝ մայիսի

13 Անդ, էջ 50-52:
14 Անդ, էջ54:

6-ին ռուսական հրետանին սկսեց ռմբակոծել քաղաքը: Սկսվեց պատասխան հարված: Արյունալի մարտերը տևեցին 5 ժամ և ավարտվեցին ռուսների անհաջողությամբ:[15]

1810 թ. նոյեմբերին, Ախլցխայի բերդի անհաջող պաշարումից հետո, ռուսական զորքերը, գեներալ Տորմասովի գլխավորությամբ, այնտեղից արտաքսեցին 1500 քրիստոնիա ընտանիք իրենց շարժական գույքերով՝ դեպի մոտակա Թիֆլիսի և Լոռվա շրջան՝ առանց ապահովելու նրանց անհրաժեշտ միջոցներով, որի հետևանքով շատ ընտանիքներ մահացան կամ անհետացան: Տորմասովը նամակ է գրում թագավորին, որ ինքն այնպես է ավերել այդ տարածաշրջանը, որ թշնամուց երկար ժամանակ կպահանջվի վերականգնելու այն[16]:

Որպեսզի վերակենդանացնեն ամբողջությամբ ավերված Լոռու տարածաշրջանի տնտեսական կյանքը, որը 1801 թ. նույնպես անցել էր Ռուսաստանի տիրապետության տակ, ռուսական ռազմական իշխանությունները ԺԹ դ. սկզբին մի քանի անգամ կազմակերպել են հայերի տեղահանություն հարևան տերություններից՝ Պարսկաստանից և Թուրքիայից: Այս գործողության արդյունքում էլ Երևանի խանությունը, Ախացխայի (որի մեջ մտնում էր նաև պատմական Ջավախքը), Կարսի փաշայությունները զգալիորեն զրկվեցին իրենց բնիկ հայ բնակչությունից:

1811 թ. դեկտեմբերի 8-ին ռուսական զորքերը, գեներալ Կուտլարեի գլխավորությամբ, գրավում են Ախալքալակի բերդը: Սակայն 1812 թ. Ռուսաստանը Թուրքիայի հետ կնքած Բուխարեստի հաշտության պայմանագրի համաձայն ստիպված է լինում վերադարձնել բերդը[17]:

1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերը 1828 թ. հուլիսի 24-ին գեներալ Պասկևիչի գլխավորությամբ կրկին գրավում են Ախալքալակի բերդը և մոտենում են Ախլցխային: 1828 թ. օգոստոսի 16-ին ռուսական զորքերը մեծ դժվարությամբ կարողացան գրավել Ախլցխան: Ախլցխայի փաշայությունն ուներ շուրջ 140.000 բնակիչ, 24 սանջակ և մոտ 5 անգամ մեծ էր Կարսի փաշայությունից[18]:

Համաձայն 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանուպոլսի պայմանագրի՝ Ախալքալակն ու Ախլցխան անցան ռուսական տիրապետության տակ: Բացի այդ, նույն պայմանագրով Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերին իրավունք է տրվում 18 ամսվա ընթացքում, իրենց շարժական գույքով անցնել Ռուսաստանի տիրապետության տակ: Արևմտահայ գաղթականները, պարսկահայ գաղթականների նման, 6 տարով ազատվում էին պետական հարկերից, կարիքավոր ընտանիքներին նպաստ էր տրվում մինչև 25 ռուբլի[19]: 1830-31 թթ. Էրզրումից, Արդահանից և Արևմտյան Հայաստանի այլ տարածքներից Ջավախք տեղափոխվեցին 7300 հայ ընտանիքներ՝ իրենց հոգևոր հովիվ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գլխավորությամբ՝ վերականգնելով 60 գյուղ և 50 եկեղեցի: Արդյունքում վերականգնվեց Ջավախքի նախկին էթնիկական պատկերը: Վերաբնակեցումից հետո Ջավախքում բնակվում էր 1716 հայ ընտանիք (մոտ. 10-11 հազ. մարդ), 639 մուսուլմանական և 179 վրացական ընտանիք[20]: Հայերը Ջավախքում մեծ աջակցություն ցույց տվեցի ռուսական զորքերին ինչպես հետագա ռուս-թուրքական պատերազմների, նույնպես և առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

15 Տե՛ս «Կովկասյան հնագիտական հանձնաժողովի ակտեր», հատ. 3, էջ 580:
16 Տե՛ս անդ, էջ 813:
17 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 7, Երևան, 1960, էջ 30:
18 Տե՛ս անդ, էջ 64:
19 Տե՛ս անդ, էջ 77:
20 Տե՛ս **Աշոտ Մելքոնյան**, Հայրենի Ջավախք, էջ 65:

Ջավախքում հայ բնակչությունը պատվար էր ռուս զինվորների համար՝ մասնավորապես Կովկասում վրացիների հակառուսական հայտարարությունների ժամանակ, ինչպես եղավ, օրինակ, 1841 թ. վրացական մեծ խռովության ժամանակ:

Ջավախքի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը դրական ազդեցություն ունեցավ ջավախահայության բնականոն ապրելակերպի եւ աշխույժ գործնեության ծավալման վրա: Տարածաշրջանը դարձավ արհեստի եւ առեւտրի կետրոններից մեկը Կովկասում, Կարապետ արքեպս. Բագրատունու ջանքերով բացվեց Մեսրոպյան դպրոցը: Գյուղերը սկսեցին կարեւոր դեր խաղալ Անդրկովկասում հացահատիկի եւ մսամթերքի արտադրության ոլորտում:

1840 թ. Ախալքալակի գավառը, որը կազմում էր թուրքական նախկին սանջակի հիմնական տարածքը, մտավ Վրացա-իմերեթական, ապա Թ-իֆլիսի նահանգի մեջ, իսկ հետո վերածվեց առանձին գավառի: 1856 թ. բարերար Կարապետ Յաղուբյանի ջանքերով ավարտվեց Ս. Խաչ եկեղեցու վերաշինությունը: 1870 թ. սկսեց գործել Սանդիտյան օրիորդաց դպրոցը, իսկ 1880-ական թթ. սկզբին՝ ռուսական դպրոցները, 1889 թ.՝ քաղաքային ուսումնարանը, ստեղծվեց թատերական խումբ: ԺԹ դարի վերջին Ջ. Տեր-Գրիգորյանի եւ Դ. Աբելյանի ջանքերով ստեղծվեց ազատագրական խմբակ: Այստեղ գործունեություն ծավալեցին Հայ հեղափոխական դաշնակցության եւ Սոցիալիստ հեղափոխականների (էսեռական) կուսակցությունները[21]:

1903-04 թթ. սկսվեցին հակացարական ելույթները: 1903 թ. հունիսին հայկական եկեղեցիների գույքի բռնագրման ցարական կառավարության հրամանը մեծ դժգոհություն առաջացրեց ինչպես բոլոր հայկական տարածքներում, նույնպես եւ Ջավախքում: Օգոստոսի 24-ին տեղի ունեցավ բողոքի բազմամարդ հանրահավաք: Այդ մասին Մ.Վարանդյանը գրում է. «Վաղ առավոտից շրջակա գյուղերից հազարավոր շինականներ խումբ-խումբ եկան լցվեցին քաղաքը: Կգային քահանաներ եւ երեցփոխներ, նաեւ բազմաթիվ կանայք եւ երեխաներ: Ամեն գյուղ իր հետ բերում էր բողոքագիր՝ ուղղված Հայոց Կաթողիկոսին: Ս. Խաչի եկեղեցու բակում հավաքված ցուցարարների թիվը հասավ 6 հազարի: Պատարագի ժամանակ ցուցարարները հրաժարվեցին հիշատակել կայսեր անունը: Բանախոսները կրակոտ ճառերով բողոքարկեցին կառավարության հակահայ քաղաքականության դեմ եւ խոստացան արյան գնով պաշտպանել իրենց պատմության դարավոր իրավունքները»[22]:

Երբ առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց, 1914 թ. օգոստոսին, Ջավախքը ռուսական կայսրության մի մասն էր կազմում: Պատերազմի առաջին ամիսներին Ջավախքը գտնվում էր հանգիստ վիճակում, մինչ թուրքական ուժերը Սարիղամիշով շարժվեցին դեպի Կովկաս: 1915-16թթ. միլիոնավոր հայեր սպանվեցին եւ միայն հայրուր հազարավորներ կարողացան փախչել Արեւելյան Հայաստան՝ ներառյալ Ջավախք: 1916 թ. ամռանը ողջ Արեւմտյան Հայաստանը գրավված էր ռուսների կողմից:

Պատերազմի նախօրեին Անդրկովկասի զանազան ազգային քաղաքական շրջանակներում բուռն քննարկման նյութ դարձավ երկրամասի վարչական տրածման հարցը: Վերոհիշյալ քննարկումները վերսկսվեցին 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո: Վրաց մենշեւիկները տվեցին իրենց համաձայնությունը, որ Ախալքալակի շրջանը առանձնացնեն Թ-իֆլիսի նահանգից եւ ներառնեն Ալեքսանդրապոլի նահանգի մեջ: Կովկասյան կոմիսարիատի կողմից հաստատվեց Կովկասում վարչական ուրվագծերի վերաբերյալ նախագիծ՝ ըստ որի ապագա Ալեքսանդրապոլի նահանգի մեջ պետք է մտնեին Ալեքսանդրապոլը, Լոռին, Կարսը, Զողը, Ախալքալակը: Թ-իֆլիսի նահանգից անջատվող Ախալքալակին պետք է միացվեին Թոռեղքի (Ծալկա), տեղամասի Աշկալայի եւ Նարդվանի

21 Տե՛ս անդ, էջ 66:

22 **Մ.Վարանդյան**, ՀՅ Դաշնակցության պատմություն, Երեւան, 1992, էջ 283:

գյուղական համայնքները, Ղարաքիլիսա գյուղը եւ Գորիի գավառի Բակուրիան տեղամասի Մոլիտ հայկական գյուղը[23]:

Սակայն Կովկասյան կոմիսարիատը, որին արտոնություններ էին տալիս վրաց մենշեւիկները, չկատարեց իր որոշումը հողատարածքների վերաբերյալ, եւ Ախալքալակը չանցավ Ալեքսանդրապոլի նահանգի մեջ: 1918 թ. փետրվարի 16-18-ին Լոռում տեղի ունեցած ՀՅԴ համագումարում որոշվեց՝ քանի որ Կովկասյան Կոմիսարիատը չի կատարում իր խոստումը Ախալքալակն Ալեքսանդրապոլին միացնելու վերաբերյալ, Ալեքսանդրապոլի վարչական շրջանը վերանվանել Ծիրակի մարզի՝ իր մեջ ներառելով բոլոր հողային տարածքները: Այս որոշման հաջորդ քայլը, բնականաբար, պետք է լիներ Ախալքալակը Ծիրակի մարզին միացնելը[24]: Սակայն սա նույնպես մնաց երազանք: Վրաց մենշեւիկները, որոնք նախկինում տվել էին իրենց համաձայնությունը, ամեն ինչ անում էին դրա չիրականացման համար: Բնականաբար սա էր պատճառը, որ Վրաց կառավարությունը թույլ չտվեց հայ գաղթականներին ապաստան գտնել իր տարածքում եւ մատնեց նրանց սովի ու ցրտահարության լեռնային շրջաններում:

1917 թ. հեղափոխությունից հետո Ջավախքում, ինչպես նաեւ ողջ տարածաշրջանում, սկսվեց նոր փուլ՝ լի փորձություններով եւ ողբերգություններով: Ռուսական զորքերը Կովկասում առաջին համաշխարհային պատերազմի հիմնական ռազմական գործողությունների ժամանակ սկսեցին ինքնաբերաբար լքել իրենց դիրքերը, ինչն էլ թույլ տվեց թուրքերին ամբողջ ճակատով անցնել հարձակման:

1917 թ. նոյեմբերին Ախլցխայում հրատարակվող «Շարժում» պարբերականը գրում էր, որ քաղաք է ժամանում նորընտիր քաղաքապետ, հրապարակախոս դաշնակցական Զորի Զորյանը, որին դիմավորեցին մեծ հանդիսավորությամբ: 1918 թ. նա դառնում է Ախլցխայի քաղաքապետ, հետագայում՝ Ախլցխայի ազգային խորհրդի նախագահ: Ախալցխայի թուրքերը, որոնք կազմում էին բնակչության 60%, սպանալով թուրքերի եւ Թիֆլիսի թուրքական խորհրդի աջակցությունը՝ 15.000 զինված մարդ է հավաքվում 1917թ. դեկտեմբերի 27-ին եւ հայերից պահանջում լքել քաղաքը՝ հայտարարելով, որ իրենք հայերի դեմ ոչինչ չունեն, իրենց հաշիվները վրացիների հետ է: Զորի Զորյանը՝ կատարելով իր առաջին քայլը որպես կառավարիչ՝ միանշանակ մերժեց թուրքերի պահանջը: Նրա գլխավորությամբ անմիջապես կազմակերպվեց քաղաքի ինքնապաշտպանություն[25]: Ջավախքի քրիստոնյա բնակչությունը Զորի Զորոյանի գլխավորությամբ կազմակերպում է ինքնապաշտպանական մարտեր: Այս մարտերի ժամանակ հայերը եւ վրացիները միասնաբար էին պայքարում եւ կարողացան պաշտպանել եւ՛ հայկական եւ՛ վրացական գյուղերը թուրքերի շրջապատումից եւ դրանք միացնել Ախալքալակին: Փետրվարին թուրքերը սկսում են զինված հարձակում Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանի եւ Կովկասի վրա: Հայերը անցնում են ինքնապաշտպանության. միայն Ջավախքում 5000 կամավորներ են գրվում: 1918 թ. Ջավախքում ստեղծվեց Ազգային Խորհուրդ, որի հետ հաշվի էր նստում Անդրկովկասյան սեյմը: Հավանաբար ելնելով այս իրողությունից՝ Կովկասյան Կոմիսարիատը ոչ մի քայլ չձեռնարկեց Ախալքալակը թուրքերի հարձակումներից պաշտպանելու համար: Նկատելով դա՝ Հայոց Ազգային Խորհուրդը սկսեց պաշտպանական ուժեր ստեղծել: Դիմեցին զորավար Անդրանիկին, որն այդ ժամանակ պաշտպանական նոր զորամասեր էր կազմակերպում Ալեքսանդրապոլում: Վերջինս ապրիլի կեսերին շարժվեց դեպի Ջավախք, սակայն սկսված թուրքական հարձակման պատճառով Աշոցքից մեկնեց Լոռի: Փոքրաթիվ հայկական ուժերը ի վիճակի չեղան դիմադրել թուրքերին, եւ 1918 թ. մայիսին թուրքական զորքերը կարողացան

23 Տե՛ս «Հորիզոն», 1918, թ.10:
24 «Մշակ», 1918, թ.16:
25 Տե՛ս **Աշոտ Մելքոնյան,** Հայրենի Ջավախք, էջ 71:

կոտրել փոքրաքանակ հայերի դիմադրությունը եւ գրավեցին Ջավախքը: Ջավախքի տասնյակ հազարավոր հայեր, որոնք կարողացել էին փրկվել 1915 թ. եղեռնից եւ որոնց հիշողության մեջ դեռ թարմ են եղեռնի պատկերները, փորձեցին փախչել եւ ապաստան գտնել Վրաստանում: Սակայն Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը, որը ստեղծվել էր 1918 թ. մայիսին, հրամայեց գեներալ Արջեվանիձեի գլխավորությամբ թույլ չտալ փախստական հայերին մտնել իր տարածաշրջան՝ այդպիսով մատնելով նրանց սովի եւ ցրտահարության: Փախստականների մեծ մասը ստիպված եղավ ապաստան գտնել Ծալկայի, Բորժոմի եւ Բակուրիանի անտառներում՝ Ախալքալակի հյուսիսում: 1919 թ. սկզբին, թուրքական ներխուժման արդյունքում, մահացան շուրջ 40 հազար գաղթականներ՝ սովից, ցրտից եւ հիվանդություններից: Դեմոկրատական Վրաստանը իր այս տմարդի արարքը արդարացնում էր իբրեւ համաճարակային հիվանդությունները կանխելու միջոց: Սակայն սա հնարք էր, քանի որ հունիս-հուլիս ամիսներին գաղթականների մեջ ոչ մի հիվանդություն չի եղել:

Հայոց Ազգային Խորհրդի աջակցությամբ թիֆլիսաբնակ ջավախքցիներից կազմակերպվեց «Ախալքալակի Հայրենյաց Միությունը», որի վարչության մեջ մտան 10 հոգի[26]: Վարչությունը կոչով դիմեց Թիֆլիսի հայությանը եւ կարողացավ որոշակի միջոցներ հանգանակել գաղթականների համար: Թուրքերը սկսեցին տարածաշրջանը վերաբնակեցնել մահմեդականներով, իսկ գաղթականներին, որոնք դիմել էին ռուսական կայսրությանը իրենց բնակավայրեր տեղափոխվելու խնդրանքով՝ մերժեցին: Այսպիսով եւ՛ վրաց կառավարության եւ՛ թուրքական կայսրության վարած քաղաքականության պատճառով սկսվել էր հայերի բնաջնջում: Վրաստանի վարած քաղաքականության պատճառով հայ գաղթականական խորհրդի ղեկավար, Հայ Ժողովրդական կուսակցության նախագահ Սամսոն Հարությունյանի նախաձեռնությամբ հրավիրվեց խորհրդակցություն, որին մասնակցեցին նաեւ Վիրահայոց Ազգային Խորհրդի նախագահության անդամները: Ախալքալակցիների կողմից նիստին հրավիրված Պողոս Աբելյանը հայտնում է, որ նրանք թուրքական կառավարությունից տեղեկացվել է, որ իրենք շուտով հեռանալու են Ախալքալակից եւ դեմ չեն հայերի վերադառնին: Վրաստանից պահանջեցին Թուրքիայի մերժման պատճենը, բայց պատասխան չստացան: Ակնհայտ դարձավ, որ Վրաստանը, մեղքը բարդելով Թուրքիայի վրա, չի ցանկանում հայերի վերադարձը: Եւ իրոք, շուտով թուրքական կառավարությունից հրաման եկավ, որ իրենք թույլատրում են հայ գաղթականների վերադարձը իրենց բնակավայրեր: 1918 թ. հաղթահարելով վրաց իշխանությունների հարուցած զանազան արգելքները՝ գաղթականները սկսեցին վերադառնալ իրենց ավերված եւ թալանված բնակավայրերը: Բակուրիանից Ախալքալակ անցնելու թույլատվության դիմաց վրաց զինվորները հայերից պահանջում էին վրացահպատակություն ընդունելու եւ գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին ստորագրություն[27]:

1918 թ. սկսվեց հայ-վրացական պատերազմը: Հայերը Ալեքսանդրապոլի կողմից մտան Ջավախք եւ սկսեցին հաջողությամբ առաջ շարժվել: Սակայն պատերազմական գործողությունները դադարեցվեցին անգլիացիների միջնորդությամբ, եւ Վրաստանը, Անտանտայի հովանավորությամբ, հաստատեց իր իշխանությունը Ջավախքում: Դեկտեմբերի 31-ին Մեծ Բրիտանիայի միջնորդությամբ հայերի եւ վրացիների միջեւ հաստատվեց զինադադար, որը պահպանվեց մինչեւ 1920 թ., երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Ախալքալակը ժամանակավորապես անցնում է

26 Տե՛ս **Աշոտ Մելքոնյան**, Հայրենի Ջավախք, էջ 72:
27 Տե՛ս անդ, էջ 5:

Վրաստանի տիրապետության տակ, սակայն վրացական զորքերի թիվը տարածաշրջանում չպետք է գերազանցի 200-ը: Վրաստանն այստեղ սահմանեց ռազմական դիկտատուրա եւ սկսվեց վրացիների հարկադրական ներգաղթ՝ Վրաստանի ներքին շրջաններից:

1921 թ. փետրվարին թուրքերը նորից հարձակվեցին Ջավախքի վրա: Այդպիսով նրանք խախտեցին Վրաստանի հետ կնքած զինադադարը: Բանն այն է, որ իր անկախության վերջին օրերին, Վրաստանի կառավարությունը թույլ էր տվել թուրքերին ներխուժելու Ախալքալակ՝ կրկին նախապես զինաթափելով հայ բնակչությանը[28]: Վրացական զորքերը, ինչպես 1918 թ., այս անգամ նույնպես ոչ մի օգնություն ցույց չտվեցին հայերին, եւ հայերը ստիպված եղան դիմել ինքնապաշտպանության: Թուրքական ներխուժման արդյունքում Ախալքալակը կորցրեց իր հայ բնակչության գրեթե 50 %-ը:

Հայաստանում եւ Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, նորից բարձրացվեց Ջավախքի սեփականության հարցը: Մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը, մասնավորապես Ախալքալակի շրջանի բնակիչները, ցանկացան միանալ Խորհրդային Հայաստանին: Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը (Ալ. Բեկզադյան, Ալ. Մյասնիկյան, Ա. Մռավյան) ընդառաջ գնալով գավառի բնակչության ցանկությանը՝ նույնպես հանդես եկան Ախալքալակն ու Ծալկայի շրջանը Հայաստանին միավորելու պահանջով: 1921 թ. նոյեմբերի 6-ին կնքվեց համաձայնագիր Խորհրդային Հայաստանի եւ Վրաստանի միջեւ հայ-վրացական սահմանագծի վերաբերյալ, սակայն դրանով նույնպես չավարտվեցին սահմանային վեճերը[29]: Գծվեց հայ-վրացական սահմանը, որը որոշակի ձեւափոխություններով պահպանվեց առ այսօր: Այսպիսով Իոսիֆ Ստալինի կամայականության պատճառով՝ Ջավախքը կարելի է ասել՝ խորհրդային իշխանության կողմից նվիրաբերվում է Վրաստանին՝ առանց հաշվի առնելու պատմական, ժողովրդագրական, մշակութային սկզբունքները: Այս համաձայնագրից հետո հայ բնակչության նկատմամբ ազգային խտրականության քաղաքականությունը շարունակվեց նոր դրսեւորումներով: Ժամանակ առ ժամանակ սահմանային խնդիրը բարձրացվեց ոչ միայն անհատ մարդկանց, այլեւ Ախալքալակի իշխանության տեղական մարմինների՝ գյուղական խորհուրդների կողմից: Որքան էլ խնդրի քննարկումներն ու արծածումները խորհրդային ժամանակահատվածում տեղի էին ունենում գաղտնիության պայմաններում, այդուհանդերձ, իրենց արձագանքներն էին գտնում արտասահմանյան եւ տեղական մամուլում: Ժամանակի մամուլի ուսումնասիրություններից երեւում է, որ այդ հարցը սրվել է 1925 թ.: Ամենայն հավանականությամբ դա կապված է եղել 1925 թ. փետրվարին, չբացահայտված պայմաններում Ալ. Մյասնիկյանի մահվան հետ: Վերջինս կարողացել էր անձնական հեղինակությամբ եւ որոշակի քայլերով ջավախեցիների շրջանում վստահություն ներշնչել խորհրդային իշխանության նկատմամբ: Կորցնելով աջակցության վերջին նշույլը՝ գավառի բնակչությունը կրկին բարձրացրեց Հայաստանին միանալու հարցը: Արտահայտելով ժողովրդի կամքը՝ համապատասխան որոշումներով 37 գյուղական խորհուրդ 1925 թ. դիմեցին Հայաստանի, Վրաստանի, ԽՍՀՄ բարձրագույն իշխանական մարմիններին: Երեւան ու Թբիլիսի են ժամանել նրանց հատուկ պատվիրակությունները: Ժամանակի համար արտառոց հարցի այդ քննությունը հանձնարարվել է կովկասյան գործերին քաջատեղյակ Սերգո Օրջոնիկիձեին: Վերջինս այդ փաստը համարել է «սկանդալ»՝ զարմանք հայտնելով Վրաստանից Հայաստանին միանալու հայերի «անբնական» ցանկության կապակցությամբ[30]: Բնականաբար, հայերի պահանջը մերժվել է: Ախալքալակցի պատվիրակները դիմել են հայ բոլշեւիկներին, այդ թվում Սաքո Համբարձումյանին՝ հույս ունենալով գոնե Վրաստանի

28 Տե՛ս անդ, էջ 94:
29 Տե՛ս անդ:
30 «Դրավդա», թերթ, 1925, մայիս 12:

տարածքում հասնել ինքնավարության: Սակայն Համբարձումյանը, որը 1925 թ. Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի նախագահի բարձր պաշտոնից տեղափոխվել էր ավելի ցածր պաշտոնի, իրեն «ապահովագրելով»՝ ախալքալաքցիներից պահանջել է թողնել եւ հեռանալ իրենց տները, նշելով, որ կոմինուսպական կուսակցությունը գիտի ում, երբ շնորհել ինքնավարություն[31]: 1927 թ. օգոստոսի 23 ստորագրվեց հայ-վրացական նոր համաձայնագիր Լենինականի եւ Ախալքալակի գավառների վարչատնտեսական սահմանների անցկացման մասին: Այս անգամ եւս նիստի մասնակիցների մեծ մասը վրացիներ եւ ադրբեջանցիներ էին: Ուստի, ինչպես կարելի էր ենթադրել, անտեսվում էին հայերի շահերը: 1933 թ. կրկին եղան նորաձեւումներ, որի արդյունքում ՀՍԽ ունեցավ տարածքային կորուստներ: Այսպիսով, սահմանային հարցերում մնալով միայնակ Խորհրդային Վրաստանի եւ Ադրբեջանի ավելի ազդեցիկ բոլշեւիկների եւ նրանց աջակցող կենտրոնի առաջ՝ Հայաստանը տեղի տվեց: Խորհրդային իշխանության տարիներին քաղաքական եւ ընկերային-տնտեսական լծակների անբարենպաստ գործնեության արդյունքում՝ հայերը սկսեցին լքել Ջավախքը: 1950-70-ական թթ. տնտեսական եւ քաղաքական վատ իրավիճակի հետեւանքով բնակչության արտահոսքը հասավ մեծ չափերի:

Ներկայումս Ջավախքն ու նրա հարակից տարածքները ապրում են ծանր եւ դժվարին օրեր: Այս շրջանը խորհրդային տարիներին լիովին անտեսված էր վրացական կառավարության կողմից: Վրաստանի անկախացումից հետո ինչպես Ջավախքի, նույնպես եւ ողջ հանրապետության հայության նկատմամբ, հատկապես 1990-ական թթ. ավելի ուժեղացավ ազգային խտրականությունը: Թբիլիսիում եւ այլ խոշոր քաղաքներում հայերին պաշտոններ տալիս էին միայն ազգանունը փոխելու եւ վրացի դառնալու պայմանով: Թեեւ հայերը Ախալքալակում եւ Նինոծմինդայում կազմում են բնակչության մեծամասնություն, այնուամենայնիվ հայերը բավարար կերպով չեն ներկայացված իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններում: Հետխորհրդային Վրաստանի գոյության ողջ ժամանակաշրջանում որեւէ էթնիկ հայ չի նշանակվել Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի ղեկավար պաշտոնում, թեեւ հայերն ըստ 2002 թ. հաշվառման տվյալների կազմել են բնակչության 55%-ը[32]: Ջավախքն ազգային միատարրությունից զրկելու համար՝ Ախալքալակի, Ախլցխայի, Նինոծմինդայի, Ասպինձայի եւ Ադիգենի շրջանները միավորվեցին մեկ նահանգի մեջ, որի կենտրոնը դարձավ հետզհետե վրացացող Ախլցխան: Դրանով Ախլաքալակն ու Նինոծմինդան դադարեցին անգամ ինքնուրույն վարչական շրջան լինելուց: 2003 թ. Վրաստանում նոր իշխանության ղեկավարության գալուց հետո էլ դեռ շարունակվեց հայերի նկատմամբ խտրական վերաբերմունքը, ինչն էլ տարածաշրջանում հանգեցնում է պարբերաբար լուրջ միջադեպերի: Ամեն ինչ ավելի սրվեց, երբ 2005 թ. Ախալքալակից դուրս հանվեցին ռուսական ռազմաբազաները: Մարտի 15-ին տեղի ունեցավ բազմահազարանոց ցույց, որի ժամանակ հայկական հասարակական-քաղաքական ներկայացուցիչները պահանջում էին վրաց իշխանությունից միջոցներ ձեռնարկել երկրի ընկերային-տնտեսական եւ քաղաքական իրավիճակի բարելավման ուղղությամբ, ինչպես նաեւ ճանաչել Թուրքիայում տեղի ունեցած 1915 թ. Ցեղասպանությունը: Սկսվեցին երկխոսություններ: Վրաստանի կառավարության ներկայացուցիչ Խաչիձեն խոստացավ միջոցներ ձեռնարկել առկա խնդիրների լուծման համար: Հանդիպման ժամանակ ջավախքցիները Խաչիձեին ներկայացրեցին իրենց պահանջները. Վրաստանի հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդում, տեղական իշխանությունների կողմից եւ դատարանում հայոց լեզվի կիրառություն (տարածաշրջանում հայոց լեզուն պետք է լիներ

31 www.horizonworld.com

32 Տե՛ս **Սերգեյ Մինասյան** Վրաստանի էթնիկական փոքրամասնությունները, Երեւան, 2006, էջ107:

երկրորդ գործածական լեզուն), ընտրությունների ժողովրդավարացում, ՀՀ սահմանին կից՝ Ժդանովական գյուղում մաքսային ծառայությունների իրականացում, ճանապարհային վերանորոգումներ եւ այլն: Խաչիձեն խոստացավ լուծումներ գտնել առկա խնդիրների վերաբերյալ, սակայն դա շարունակություն չունեցավ: Հետեւաբար Մարտի 28-ին տեղի ունեցավ հանրահավաք[33]: Հայերի հանրահավաքներին վերջ տալու համար Վրաստանի նախագահ Սահակաշվիլին անսպասելիորեն Վրաստան հրավիրեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին: Քննարկվող հարցերի շարքում առաջնայինը Սամցխե-Ջավախքի հիմնահարցն էր: Սակայն սա ջավախքցիների կյանքում ոչ մի փոփոխություն չմտցրեց:

Հատկապես ծանր է Ջավախքի տնտեսական վիճակը: Աշխատատեղերի չգոյությունը, ազգային խտրականությունը, վրացական իշխանությունների նկատմամբ հիմնավորված անվստահության աճը, էլեկտրաէներգիայի մատակարարման անմխիթար վիճակը հազարավոր մարդկանց հարկադրում է թողնել հայրենի բնակավայրերը, արտագաղթել:

Անմխիթար վիճակում է նաեւ Ջավախքի կրթամշակութային կյանքը: Անդրադառնալով լեզվի եւ կրթության խնդիրներին՝ բնակչությունը սուր կերպով է ընկալում դպրոցներում կամ գործավարության մեջ վրացերենի գործածությունն արագացնելու փորձերը: Թեեւ տարածաշրջանում պետական ծառայողներին վրացերենի ուսուցման փորձեր են արվում, այն էլ ֆինասական աջակցությամբ, սակայն դա չի կարող հասնել հաջողության: Հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդման խնդիրը առ այսօր շարունակում է պահպանել իր լրջությունը, քանի որ Վրաստանի կրթության նախարարության կողմից հրատարակվող պատմության գրքերը պարունակում են հայերի համար ոչ ընդունելի պատմական դրույթներ եւ մեկնաբանություններ, իսկ ՀՀ կողմից հրատարակվող պատմության գրքերը չի թույլատրվում օգտագործել: Ըստ 2005 թ. տվյալների Սամցխե-Ջավախքում գործում էր 253 դպրոց, որոնք բաշխված էին հետեւյալ կերպ՝ 132 վրացական, 104 հայկական, 4 ռուսական, 6 վրաց-հայկական, 4 վրաց-ռուսական, 2 ռուս-հայկական, 1 վրաց-ռուս-հայկական դպրոց[34]: Տարիներով դպրոցների ուսուցիչները չեն ստանում աշխատավարձ, դպրոցները գտնվում են կիսաքանդ վիճակում: Կառավարության կողմից հայ դպրոցները ոչ մի ուշադրության չեն արժանանում: Դպրոցական շենքերն ընդհանուր առմամբ վատթար վիճակում են, վատ են ջեռուցվում: Այնինչ, վրացական դպրոցները բարվոք վիճակում են եւ ջեռուցվում են, իսկ հայկական դպրոցներում աշակերտները ստիպված են վառելիքը բերել տնից, իսկ ամենացուրտ ամիսներին դասերը դադարեցվում են: ՀՀ կառավարությունը դպրոցները ապահովում է դասագրքով, իրականացնում որոշ դպրոցների վերանորոգում, սակայն օգնության ծավալը չափազանց անբավարար է եւ անհրաժեշտ է ինչպես Վրաստանի, նույնպես եւ միջազգային հանրության ռեսուրսների ավելի ակտիվ ներգրավում: Տարածաշրջանում գործում է 3 պետական եւ 2 մասնավոր ԲՈՒՀ: Ախալքալակում 2002 թ. բացվել է Թբիլիսիի պետական համալսարանի Ջավախքի մասնաճյուղ, որտեղ ուսուցումը տրվում էր վրացերենով: Վերջին ուսումնական տարում այստեղ Ջավախքից ընդունվել է միայն 2 դիմորդ[35]: Բարձրագույն կրթություն ստանալու համար ուսանողների մեծ մասը գնում են ՀՀ կամ Ռուսաստանի Դաշնություն: Նյութական ծանր վիճակում են նաեւ Ջավախքի թոշակառուները եւ ազատամարտիկները:

Լիովին խաթարված է հոգեւոր-եկեղեցական կյանքը. Ախալքալակում եւ Նինոծմինդայում հոգեւոր ծառայություն են մատուցում մեկ-երկու քահանա: Ներեկեղեցական հարաբերությունները կարգավորելու նպատակով 2011թ. հունիսի 11-ին Վրաստան ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ: Վեհափառ Հայրապետի այցելությունից մի քանի օր

33 www.regnum.ru. 23.03.05.
34 Տես **Սերգեյ Մինասյան**, էջ 144:
35 Տես անդ:

հետո Վրաստան ժամանեց ՀՀ ԱԳ նախարարը՝ կատարելով հայտարարություն հայկական եկեղեցիների կարգավիճակի մասին, ինչը խոսում էր այն մասին, որ նրա նպատակն է Կաթողիկոսի սկսած գործն ավարտին հասցնելը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր հերթին ողջունել է Վրաստանի կառավարությանը՝ Հայ Առաքելական եկեղեցուն իրավական կարգավիճակ տալու որոշման համար եւ ենթադրվում է, որ հաջորդ քայլը պետք է լինի հայկական 6 եկեղեցիների վերադարձը վրացահայ թեմին, որպեսզի թեմը կարողանա լիովին ծառայել հայ ժողովրդին[36]:

Ջավախքի պատմության համառոտ շարադրանքից երեւում է, որ այն հաճախ է ենթարկվել ավերածությունների, բնակչության արտագաղթի եւ կոտորածների, միշտ դարձել է պատերազմական հակամարտությունների թատերաբեմ: Սակայն, չնայած ընկերային-տնտեսական ծանր կացությանը, այսօր Ջավախքը դիտվում է որպես երկու պետությունների հետագա մերձեցման եւ դարավոր բարեկամության խորացման տարածաշրջան:

36 Տես www.news.am 06.2011: